



“ԹՈՂ ՏՈՒԷՔ ՄԱՆԻ ՏՂՈՅԸ ՈՐ ԻՆՏԻ ԳԱՆ” ԴՈՒԿ. ԺԸ. 46.

ՀԱՏՈՐ ԺԱ.

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ, ԱՊՐԻԼ 1, 1882

ԹԻԻ 4



ՉԻՆԱՍՏԱՆԻ ՄԷՋ ԹՈՒՌՅԻԿ

Թուոցիկ թուոցանել Չինու մէջ միայն մանկանց և պատանեաց յատուկ դրօսանք չէ, ինչպէս է ուրիշ երկիրներու մէջ: Վերի պատկերին մէջ կը տեսնուի ակնոցաւոր ծեր մը և տղայ մը որ կ'օգնէ ծերին թուոցանելու իր թուոցիկ վելչալը:

Չինացիք թուոցիկը կը կոչեն Վեւ, որ տեսակ մը թուոցիկ անուն է, և թուոցիկին այս անունը կը տրուի,

ՉԻՆԱՍՏԱՆԻ ՄԷՋ ԹՈՒՌՅԻԿ

վասն զի օդին մէջ թուոցիկի շարժումը կը նմանի այն թուոցիկ թուոցիկին: Չինացիք ամէն տարի նոյ. ամսոյ մէջ օր մը ունին թուոցիկ թուոցանելու: Այն օրը Ֆուչաու քաղաքին մօտ իբր 30,000 մը հողիք այս խաղով կը զբօսանան:

Թէ ինչպէս ծագում առած է թուոցիկի տօնը Չինու մէջ, հետևեալ կերպով կը պատմուի: Հին ասեանները կար գուշակ մը կամ մարգարէ մը որ

խրատ տուաւ իր մէկ բարեկամին տունը շինալ այս ինչ օրը: Ասոր վրայ բարեկամը հանդերձ ընտանեօք զնաց այն օրն անցունելու մերձակայ բլուրները թուոցիկ թուոցանելով, և երբ երկոյին տուն դարձաւ, տեսաւ որ իւր բոլոր ընտանի անասունները մեռած էին: Այն ժամանակէն ի վեր այն օրուան տարեգարձը կը պահուի իբրև տօն, և հիմա այս տօնը հասարակ է գրեթէ բոլոր Չինաստանի մէջ: Թուոցիկ թուոցիկ

ցանոցները կը ջանան այլևայլ կերպով մէկ մէկու թռուցիկներուն չուանները կտրելու, և շատ կը զուարճանան եթէ թռուցիկի մը չուանը բրդի, և թռուցիկն օգն ելլելով հեռաւոր տեղ մը իյնայ :

Տօնին վերջը, տուն դառնալէ քիչ մը յառաջ, թռուցիկի տէրերը գեղեցիկ խօսք մը կը գրեն, կամ բախտաւոր աստղի մը պատկերը կը նկարեն թռուցիկին վրայ, և ապա բարձրերը թռուցանելով զանոնք կը կարեն չուանները, և կը թողուն որ թռուցիկները վեր ելլելով թռչին երթան : Այսպէս կը կարծեն ի բայ ընել չարիքներ որ կրնային իրենց կամ իրենց ընտանեաց վրայ դալ : Չինացիք շատ ճարտար են թռուցիկ շինելու արուեստին մէջ, և կը շինեն իրենց թռուցիկներն ի ձև այլևայլ կենդանեաց, և երբեմն կուտան անոնց հոգեք կամ սուրբներն որ հաճելի ձայն կը հանեն, և այս ձայնը կը ըստի բաւական հեռուէն :

ԱՂԲԵՐԱԿՈՒՆԲ


Տղայք գիտեն թէ ինչ է աղբուրի ակն, քանզի բնական մէկ գիւղի մօտ կը գտնուին ակունք ուստի կը բղխէ ջուր : Բայց, սիրելի տղայք, գիտէ՞ք թէ ուստի կու գայ ջուրը որ միշտ կը հոսի աղբուրակներէ, և ինչու այս ինչ տեղեր առատ աղբուրներ կան, և ուրիշ տեղեր բնաւ չկան :

Չորը գլխաւորաբար ծովէն կ'ելլէ : Գիտէք որ եթէ ջուր գնէք ամանի մը մէջ, և ամանը թողուք բաց օդը, ջուրը քանի մ'օրէն անցայտ կ'ըլլայ : Այն ամանին մէջ գտնուած ջուրը շոգւոյ կը փոխուի ճիշտ այնպէս ինչպէս կը շոգիանայ ջուրը զոր կ'եռացունես կրակի վրայ : Առաջին դէպքին մէջ ջուրը տակաւ առ տակաւ կը փոխուի շոգւոյ, և շոգին շտեմնուի որ այնպէս յայտնի ինչպէս կը տեսնուի եռացեալ ջրոյ շոգին :

Ամբալ քանակութեամբ շոգին որ կ'ելլէ ուղիւնտուն, կը կազմէ ամպեր որ յերկիր կ'իջնեն իրբև անձրև և ձիւն : Այս ջուրին մէկ մասն ևս շոգիանալով նորէն օդը կ'ելլէ և հոն ամպ կը կազմէ, բայց մեծագոյն մասը կ'անցնի հողին մէջ :

Նախ քան բացատրելը թէ ջուրը հողին տակ անցնելէ ետքը ուր կ'երթայ, հարկ է քիչ մը տեղեկութիւն տալ հողին բնութեան վրայ : Շատ

տեղեր հողն է աւազուտ, և այսպիսի տեղ ջուրը կրնայ գիւրաւ հոսել ամէն կողմ : Ուրիշ տեղեր հողն է կաւոտ, և ջուրը չկրնար գիւրաւ անցնիլ այսպիսի հողի մէջէն : Գարձեալ գրեթէ ամէն տեղ հողին տակ կան ժայռի խաւեր : Այս ժայռերն եթէ ճայթած կամ ճեղքուած չեն, չեն թողոր ջրոյ անցնել իրենց մէջէն : Նաև ժայռի խաւերն են երբեմն հորիզոնական, բայց յաճախ չեղ, ինչպէս կը տեսնուի պատկերին մէջ, ուր (a) (a) կը ցուցնէ ծակոտկէն հող կամ գետին, և (b) (b) ժայռի խաւեր : Չորը որ (a) (a) խաւին ձախ ծայրէն կ'անցնի ծակոտկէն հողին կամ գետնի մէջ, կը հոսէ վար, և կը լեցնէ այն ծակոտկէն հողը որ կայ (c) և (d) կէտրուն տակ, և եթէ (e) կամ (d) կէտերուն տակ (b) ժայռը կտորի կամ ճայթի, ջուրը ճնշուելով ժայռի խաւին մէջէն վեր կ'ելլէ, և (c) կամ (d) կէ-



ԱՂԲԵՐԱԿՈՒՆԲ

տերուն մէկուն վրայ կը կազմէ աղբուր մը, որ կը հոսի ցորչափ ջուր կը ժողվուի տակի հողին մէջ :

Յաջորդ թուոյն մէջ պիտի խօսինք այլևայլ տեսակ աղբուրներու և Արդէսեան ջրհորներու վրայ :

ՇՈՒՆՆԵՐՈՒ ՀԱՆՃԱՐԸ

Անգղիոյ և Ամերիկայի լրագիրք երբեմն երբեմն կը գնեն այլևայլ տեսակ շանց պատմութիւններ ուր յայտնի կը տեսնուի այս անասնոց հանճարը : Հետեւեալ պատմութիւնը կը ցուցնէ թէ շունք երբեմն կ'ընեն գործեր որ տրամաբանութեան արդիւնք են : «Այն գամ մը» կ'ըսէ այս պատմութիւնը գրողն, «անգամ մը տուն կը դառնայի քաղաքէն» որ իբր երկու միոն հեռու էր բնակարանէս : Տունէս իբր կէս միոն սաղին կար գետ մը երկայն կամրջով, երբ կամրջին մօտեցայ, տեսայ որ շունս դաշտին վրայ թռչուն կը փնտուէր : Անտան միտքս եկաւ պահուիլ տեղ մը և սպասել որ շունը դար գտնէր զիս : Շուտով կամրջին վրայ անցայ,

և քաղցրի մինչև տեղ մը ուր կամուրջին տակը ջուր չկար, և այն տեղ կամուրջէն վար ցատկելով պահուր տեսայ կամուրջին տակ : Այս տեղէն կրնայի շան բոլոր շարժումները տեսնել Քիչ մը ետքը շունը տեսաւ որ աներից իր կողմ էի, և վազելով կամրջին դուխը սկսաւ հոտոտել հեռքս, և իմացաւ թէ անցած էի այն տեղէն : Ապա փութով վազեց անցաւ այն տեղէն, այն վրայէն ուր պահուած էի, և ելաւ բլուրի մը վրայ ուստի կը տեսնուէր ճամբան մինչև տունս : Բայց շունը չը տեսնելով զիս ճամբուն վրայ, և իբր թէ խորհելով որ մինչև տուն հասնելու ժամանակ ունեցած չէի, կարծեց թէ ճամբուն վրայ իր ետին տեղ մը ըլլալու էի : Ասոր վրայ վազելով գնաց կամրջին վերի ծայրը, և ինամով գրններով հեռքս, հասկցաւ թէ ստուգիւ անցած էի կամուրջին վրայ : Ուստի նորէն վազեց բլուրը ուր գացած էր յառաջ, և դարձեալ շտեմաւ զիս ճամբուն վրայ : Նորէն խորհելով թէ տուն հասած ըլլալու չէի, դարձաւ կամրջին վերի գլուխը, և երբորդ անգամ գտնելով հետքս սկսաւ երթալ հետոցս վրայ մեզմով ոտն առ ոտն մինչև հասաւ կամրջին վրայ այն տեղն ուստի վար ցատկած էի, և ինք ևս նոյն կողմ դառնալով վար ցատկեց և

եկաւ գտաւ զիս ուր թաքուցեալ էի :” Այս պատմութեանէն կը տեսնուի թէ շունը ինչպէս և հետեւութիւններ կը հանէր ինչպէս կ'ընենք մենք : Առաջին անգամ կամրջին դուխը գալով կարծեց թէ տեղն անցած էր անկէ, բայց երբ բլրոյն վրայ ելլելով շտեմաւ տէր ճամբուն վրայ կամրջէն դէպ ի տունը, որպէս թէ ըստ մտքէն. «Առաջին անգամ կամուրջն եկայ, և տիրոջս հեռքը հոտոտելով աճապարանօք հետեւցուցի թէ տէրս կամուրջէն անցած էր, ուստի և վաղեցի ելայ բլուրը : Հասկցայ որ տէրս տունը հասնելու ժամանակ ունեցած չէր, և սկսայ խորհիլ որ թերևս սխալած էի կարծելով թէ կամուրջէն անցած էր, ետ եկայ, և ստուգեցի թէ արդարեւ կամուրջին վրայ ելած էր, և նորէն բլուրը վաղեցի տեսնելու թէ ուր գացած էր : Ճամբուն վրայ շտեմնելով տէրս, հասկցայ թէ դարձեալ սխալած էի խորհելով որ կամուրջէն անցած և դէպ ի բլուր գացած էր : Արդ, ուրիշ բան չէր մնար ինձ ընել, բայց միայն նորէն ետ դառնալ և հեռքը գտնելով քայլ առ քայլ հետեւի անոր հետոցը մինչև որ գտնեմ զիս :”

ՆԱԽԱՊԱՀԱՐԱՄՈՒՆՔ

Ամէն երկրի մէջ կան շատ նախապաշարու մեներ որ մեծ ազդեցութիւն կը գործեն մարդոց վրայ: Զորքորինակ շատերը կը հաւատան թէ մեռելոց ուղիք կ'առնուն անասնելի կերպարանք, և կը յայտնուին կենդանի մարդոց: Որեկցէ տարօրինակ երևոյթ մէկէն կ'ընծայուի «ոգիներու»: Բայց ցորչափ գիտութիւնն կը յառաջադիմէ և ցորչափ հասարակ մարդիկ կը լուսաւորուին, այն նախապաշարմունք կը կորսնցընեն իրենց զօրութիւնը: Կ'ուզենք խօսիլ երկու անասնէրէն յիշուած վրայ որ քիչ անգամ կը տեսնուին, և որ մեծ անպատճառած են անցեալ դարերու մէջ: Այս երևոյթներուն առաջինը կը տեսնուի առաջին պատկերին մէջ, և կ'երևի վառած ճրագի նման: Այս երևոյթն ընդհանրապէս կը տեսնուի ճախնային անգղեր, կամ գերեզմանատուններու մօտ ուր կենդանական կամ բուսական նիւթը կը փախի, և կ'երևի երբօքը հանգարտ է, և ընդհանրապէս կը շարժի ծանր ծանր, և գետնէն երեք կամ չորս ոտք վեր: Այս երևոյթը կը կոչուի լատիներէն «իկնիս ֆագուուս», որ Հայերէն կը թարգմանուի «մալի հուր»: Այս հուրն է անտարակոյս կազ, որ կ'ելլէ փտոյ նիւթէն, և կը բռնկի երբ օդին հետ կը հազորդուի, և շուտ կը սպառուի:

Երկրորդ երևոյթն որ կը տեսնուի միւս պատկերին մէջ, է լուսեղէն գնտակներու ձևով որ երբեմն կը տեսնուի նաւերու կայմերուն ծայրերը, և նաւատորմներէ կը կոչուի «Սուրբ էլիպի հուր»: Նոյն լուսոյ գընտակները երբեմն տեսնուած են բանակի մը զինուորաց նիւրակներուն ծայրերը, և այս երևոյթն անգամ մը մեծ սարսափ պատճառած է բանակի մը:


Այս երևոյթը յառաջ կու գայ մը թնորտին մասնաւոր մէկ ելեքարական վիճակէն: Յիշեալ լոյսն է անտարակոյս ելեքարական լոյս նման հիւսիսայցի լուսոյն, որ յաճախ կը տեսնուի հիւսիսային երկիրներ: Այս երևոյթը շատ գեղեցիկ կերպով կրնայ ցուցուիլ պարզ ելեքարական գործիքով, և բուրբոլին անփխաս է, քանզի այն երևոյթը

յառաջ բերելու համար քիչ ելեքարականութիւն հարկաւոր է:

Այսպէս կը տեսնենք որ փոքր ինչ հատութիւն գիտութեանց կը փարատեն նախապաշարեալ գաղափարներ որ յաճախ մեծ ան և երկիւզ պատճառած են մարդոց:



ՄՈՒԼԻ ՀՈՐԻ՞



ՍՈՒՐԵ ԵՆՄՈՒՅԻ ՀՈՐԻ

ԳԷՇ ՍՈՎՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Երեմիա մարդարէն կ'ըսէ, «Միթէ կարելի է որ Եթէ ովպացին իր մորթը կամ ինձը իր խայտուցները փոխէ, որ դուք ալ չարութիւն ընելու սորված ըլլալով՝ կարենաք աղէկութիւն ընել»: (Երեմ. Ժ. 9. 23): Այս խօսքով մարդարէն ըսել կ'ուզէ թէ մեզք գործե-

լու սովորէն ետքը գրեթէ անկարելի է մարդու մը թողուլ զայն: Այսպէս է նաև անոնց որ գէշ սովորութիւններ կ'ունենան: Ուստի շատ կարևոր է որ մանկութեան և պատանեկութեան տարին աղէկ սովորութիւններ ստանանք: Եթէ տղայ մը կը սկսի սուտ խօսիլ և խաբել, ստախօսութիւն և խաբեկոյթութիւն շուտով սովորութիւն կ'ըլլան անոր: Այսպիսի տղայ մը պատիւր կը կորսնցունէ, ոչ ոք կը վստահի անոր, և ճշմարտասէր մարդիկ չեն ուզեր գործ տալ անոր:

Եթէ տղայ մը կը սկսի խմել ոգիելից ըմպելիք, շուտով կը ստանայ արբեցողութեան սովորութիւն, և անոր ախորժակը օր ըստ օրէ զօրանալով կը սիրէ անոր, և տղան գերի ըլլալով ըմպելեաց կը կորսնցունէ առողջութիւնը և առողջ դատողութիւնը և կ'ըլլայ թըշուառ: Անգղիոյ, Ամերիկայի և Թուրքիոյ մէջ հազարաւոր արք և միլիոն իսկ կանայք, կը մեռնին արբեցողութեան պատճառաւ, և շատ ցաւով է որ անոնց ահաւոր օրինակը ետ չկեցնեն ուրիշ հազարաւոր անձեր նոյն ճամբէն քայլէ:

Իմաստութիւն է օգուտ քաղել փորձառութեանց դասերէն: Ամէն տղայ կամ աղջիկ որ կը կարդայ այս յօդուածը, թող ուշադրութեամբ խորհի, և ջանա ստանալ ճշմարտաստութեան սովորութիւն, այսինքն բնաւ չխաբելու և սուտ չխօսելու սովորութիւն: Ամերիկայի առաջին նախագահը, Մեծն Վաշինկոն, երբ հասարակաց գործերը թողլով իւր ազարակն առանձնացաւ, իւր տունն ունէր աղջիկ թոռ մը, որ մեծցած էր, և կը սիրէր երեկոյեան դէմ պատիլ ազարակին շուրջը գտնուած անտառակաց մէջ: Երեկոյ մը աղջիկը ուշ եկաւ տունը, և մեծ

մայրն հարցոց անոր թէ անասնաւանձինն կը պտտէր: Աղջիկը պատասխանեց թէ առանձին էր: Ասոր վրայ տիկին վաշինկոն յանդիմանեց աղջիկն ըսելով թէ անխոհեմութիւն էր ուշ ատեն մինակ պտտիլ դուրսը: Երբ աղջիկը սենեկէն դուրս կ'ելլէր, լսեց որ վաշինկոն զօրապետն իւր տիկնոջ կ'ըսէր. «Տիկին, կրնայ ըլլալ որ

առանց պատճառի յանդիմանեցիր օրիորդ Հեղինէն, թերևս նա մինակ չէր:՝ Օրիորդն երբ այս խօսքը լսեց, ետ դարձաւ, և վաշինկոն զօրապետին երեսն ի վեր նայելով ըսաւ, «Տէր, դուք ինձ սորվեցուցիք ճշմարիտը խօսիլ, և երբ մեծ մօրս ըսի թէ մինակ էի, կը յուսամ թէ հաւատացիք որ մինակ էի:» «Վաշինկոն ըսաւ, «Ներումն կը խնդրեմ քեանէ, ազջիկս, երբէք սարակուսելու չէի քու խօսքիդ վրայ:»

Թող ամէն տղայ զգուշանայ ոչ միայն ստախօսութենէ, այլ և ամէն տեսակ փաստակար ըմպելիներէ: Արբեցողութեան սովորութիւնն այնպէս դիւրաւ կը ստացուի որ, անկէ ազատ մնալու միակ ճամբան է բնաւ չգործածել ոգելից ըմպելիք: Տղայք, ջանացեք նաև աշխատասէր ըլլալ: Ծոյլ մարդը մեծ գործ մը ի գլուխ հաներ: Աշխատասէր մարդն է որ կը յաջողի: Մարդ մը որ կ'ուզէ ստանալ գիտութիւն կամ հարստութիւն, պարտի աշխատիլ: Սիրելի զաւակներս, ջանացեք ըլլալ ուղիղ, ժուժկալ և աշխատասէր, և անատեն կը յաջողիք ինչ գործի որ ձեռք զարնէք:

ԿԵՄՄԻ ԱՆՅՔԸ

Մեր նախնիքաց թիւերուն մէջ Աւետաբերի ընթերցողաց քիչ մը տեղեկութիւն տալինք ստորերկրեայ նշանաւոր ճամբաներու վրայ որ շինուած են Զուիցերայի լեռներուն մէջ տեղէն: Այս թուոյն մէջ կուտանք տեղեկութիւն ուրիշ նշանաւոր գործի մը վրայ որ կը կոչուի «Կէմմի անցք»:

Այս անցքն է ճամբայ մը զոր տարիներ առաջ շինած են գիւղացիք: Այս ճամբան կը տանի Բոնի հովտէն, Կէմմի լեռանց վրայէն ի հիւսիսային Զուիցերիա: Բոնի հովտէն ճամբորդողը երբ կը հասնի Լոյքերպատ գիւղն, որ նշանաւոր է հոն գտնուած ջերմուկներուն պատճառաւ, կը տեսնէ իւր առջև շատ բարձր և սեպացեայ լեռ մը: Ճամբորդը զարմացմամբ կը հարցնէ ինքն իրեն թէ ուր կրնայ ըլլալ ճամբան այս լեռնէն անցնելու, քանզի չտեսներ լեռան երեսը ձոր կամ այլ ինչ, բայց միայն անտառակ մը, և

անկէ անդին լեռան սեպացեայ կողմ: Սակայն ճամբորդը կ'երթայ դէպ անտառակը և այն անտառակէն անցնելով ինքզինք կը գտնէ լեռան ստորոտը, և հոն առաջին անգամ կը նշմարէ թէ լեռան մէջտեղ կայ բացուածք մը որ պէս թէ լեռը ճեղքուած է երկրապարզ և անուս դիւղացիներ առանց երկրաչափի խորհրդոյ շինած են այս ճամբան, գործը արդարև զարմանալի կը թուի: Քանի մը տարի առաջ հասարարկած մը պատահեցաւ տիկնոջ մը որ ձկով կ'իջնէր այն անցքէն: Զիտն ոտքը սահեցաւ, և ձկն և հեծեալը գահավէժէն վար իյնալով կտոր կտոր եղան:



ԿԵՄՄԻ ԱՆՅՔԸ

չարժէ: Բացուածքին երկու կողմի պատերը տեղ տեղ իրարու շատ մօտ են: Այս պատերէն մէկուն երեսին վրայ Բոնի հովտին գիւղացիք ճամբայ մը բանալ որոշեցին: Ճամբուն մէկ մասը կը տեսնուի պատկերին մէջ:



ՅԻՍՏԱՐԻՆ

Ժայռին երեսը չորս կանգուն լայնութեամբ ճամբայ մը փորուած է: Ինչպէս կը տեսնուի պատկերին մէջ, ժայռին վերի կողմը ճամբուն վրայ երկնցուած է, և ժայռը այնպէս սեպ է որ շատ տեղեր եթէ վերէն քար մը շիտակ վար ձգուի, քանի մը հարիւր ոտք վար կ'երթայ առանց երբէք ժայռին դպչելու: Երբ կը խորհնիք թէ

պարզ և անուս դիւղացիներ առանց երկրաչափի խորհրդոյ շինած են այս ճամբան, գործը արդարև զարմանալի կը թուի: Քանի մը տարի առաջ հասարարկած մը պատահեցաւ տիկնոջ մը որ ձկով կ'իջնէր այն անցքէն: Զիտն ոտքը սահեցաւ, և ձկն և հեծեալը գահավէժէն վար իյնալով կտոր կտոր եղան:

Այս արկածին վրայ արդէրդ դրուեցաւ որ ճանապարհորդք անցքէն վար իջնելու ատեն ձի չհեծնան, այլ կամ քաշեն, և կամ նախին դեպակներու մէջ զօրս կրեն մարդիկ:

ՅԻՍՏԱՐԻՆ ԵՒ ԱՆՈՐ ԹՈՒՌՅԻԿԸ

Բենիամին Ֆրանքլին խորհեցաւ թէ փայլակն և ելեքարականութիւն նոյն են, և ուղեց փորձով հաստատել զայսուստի թուացիկ մը հանեց օդն ամպոտ օր մը, և իւր ձեռքին մօտ թուացիկին չուանին կապեց բանալի մը: Քանի մը վայրկեան ետքը տեսաւ որ չուանին վրայ բարակ բարակ թելեր

ըր կը ցցուէին իբր ելեքարականութենէ ազդեալ: Նաև Ֆրանքլին ձեռքը բանալոյն վրայ դրաւ, և զգաց այնպիսի ցնցում մը զոր մարդկը զգայ երբ ելեկտրական մեքենայի մը դպչի: Ֆրանքլին ասկէ հասկցաւ որ ամպերէն ելեկտրական հեղուկէ փոքր մաս մը վար իջած և բանալիէն իւր ձեռքին վրայ անցած էր:

Այս գեղեցիկ փորձին արդիւնքը սա եղաւ որ Ֆրանքլին հնարեց երկաթեայ ձողեր, որ տուներու վրայ դրուելով շէնքերը անփասս կը պահեն շանթէ:

ԱՒԵՏԱԲԵՐՆԵՐՈՒ ԳԻՆՆԵՐԸ

ԱՄՍՍԿԱՆ (Հայերէն քրտ, և Հյ. Տահիլէն և Պոլսեցիք), փոսթայի ծախքով, տարին 1/4 մէճիտիլէ:

Ամերիկայի Միտիոնարաց ընկերութեան կողմէն
Իմքազիր ձ. Բ. ԿՐԻՆ
Ֆիլադելֆիայի Եօզուշու, Ամերիկան Իան

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Ա. ՅԱՊՈՐ ԳՈՅՆՅԵԱՆ